

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐ

«ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ».

Է.

Այս յօդուածը վաղուց գրուած էր և մնում էր միայն տպագրութեան համար պատրաստել, երբ հրատարակուեցաւ իմ և Կոմիտան վարդապետի խմբագրութեամբ «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի առաջին յիսնեակը: Այս երգարանը «Մուրճ» ամսագրի մէջ 1903 թ. № 11. էր. 200 «արժանացաւ» մատենախօսութեան, որի միակ գովասանական խօսքն է. «Այսպիսի երգարաններ շատերն են հրատարակել հրէշաւոր աղաւաղումներով, սակայն և ոչ մէկը չի արժանացել քննութեան» (երևի, «Մուրճի» մէջ):

Մեզ համար գովեստն առանձին արժէք չունի, քանի որ գրքոյկն արդէն իւր ճանապարհը բաց է արել, բայց որ մեր գրական ամսագրի մէջ այդպիսի ձախ ձեռով գրած մատենախօսութիւն է երևան գալիս, այդ ցաւ է պատճառում մեզ: Այս առթով մեր յօդուածը փոքր ինչ փոփոխութեան ենթարկեցինք, որը գուցէ յարմար չէ մասնագիտական ուղումնասիրութեան տեսակէտից, բայց մեր ընթերցողներից քչերն են մասնագէտ: Այս ի նկատի ունենալով աւելորդ չենք համարում այստեղ մի քանի խօսք ևս ասել:

Մատենախօսը շատ անորոշ ու տարտամ գաղափար ունի հայ ժողովրդական երգերի մասին և չի հասկացել թէ մեր խմբագրած երգարանը ինչ է.

Նախ արդեօք միևնոյն բանն է «ժողովրդական երգա-

րան», և «Ժողովրդական երգերի խմբագրուած ժողովածու» և կամ ընդհանրապէս «Ժողովածու», ինչպէս դնում է մատենախօսը մեր խմբագրած երգարանի համար:

Թէ միևնոյն բանը չէ, այդ կարծում ենք պէտք է հասկանայ ամեն մարդ, որ ձեռք է դարձում մատենախօսութիւն գրելու, բայց «Մուրճի» Մատենախօսն այդ տարրական բանը չէ հասկանում. նա ժողովրդական վազբիկ երգարանից պահանջում է ինչ որ ժողովածուներից միայն կարելի է պահանջել:

Ինչ պիտի լինի մեր բանահաւաքների, այսինքն ժողովածուներ կազմողների խնդիրը մեր ժողովրդական երգերի նկատմամբ:—Շատ պարզ բան, անել այն, ինչ որ ցարդ արել են, այսինքն գրի առնել բոլոր ժողովրդական երգերը, ինչ ձևով որ ժողովուրդը երգում է, անիմաստ թէ իմաստալից, թերի թէ ամբողջ, աղճատուած թէ ուղիղ, անկապ կցուած թէ իմաստալից կապակցութեամբ, մի խօսքով, ինչպէս ժողովրդի բերանից լսում է, այնպէս էլ պէտք է գրել և հրատարակել յիշելով թէ երբ, որտեղ ումից է գրի առնուած երգը: Այս խնդիրը գուցէ 1860-ական թուականներում դեռ նոր էր մեղնում, բայց այժմ արդէն վաղուց ի վեր հասարակաց գաղափար է դարձած, և այդպէս էլ վարուել են և վարում են մեր բանահաւաքները: Այդ հասկացողութիւնը կարելի է «Մուրճի» նորագոյս մատենախօս Ա. Վ. Դ.-ի համար նորութիւն է եղել. մի տեղ կարդացել է ու հաւանել և ապա իւր գիւտը սաղացնել է ուղեցել մեր «Ժողովրդական երգարանի» գլխին, չհասկանալով թէ ինչ է նշանակում խմբագրել մի երգարան, թէպէտ և մենք երգարանի ծանօթութեան մէջ բացատրած ենք թէ ինչպէս ենք կատարել «Հաղար ու մի խաղի» խմբագրութիւնը. բայց այդ մասին կատարեալ լռութիւն պահելը երևի խոհեմութիւն է համարել մատենախօսը: Ահա թէ ինչ է գրում Ա. Վ. Դ.

«Ինչեւ այժմ մեր ժողովրդական երգաբաններ թէ բովանդակութեան եւ թէ եղանակների կողմից մեծ յասամբ խեղաթիւրումների են ենթարկուել (երեւի ուղում է ասել՝ երգեր, թէ չէ այդ իր երգարանները եւ ի վեր են խեղաթիւրումների ենթարկել): «Երբ լսեցինք թէ ժողովրդական երգերի

Հրատարակութեան ձեռնամուկն են եղել Կոմիտաս վարդապետն եւ Մ. Աբեղեանը, մենք ուրախացանք, որովհետեւ գիտենք Հայր Կոմիտասի հմտութիւնը եղանակների եւ այ. Աբեղեանի գիտական սխառաստութիւնը առ հասարակ ազգագրական գիտութեան եւ ի մասնաւորի Հայ ժողովրդական բանահիւսութեան նկատմամբ: Այսպիսի տրամադրութեամբ ղեկուած դէպի Հրատարակիչները, մենք ձեռք զարկինք նրանց «Հաղար ու մի խաղ» երգաբանի ընթերցմանը: Անշուշտ Հրատարակութեան միտքը շատ գեղեցիկ է՝ տալ ժողովրդական երգերի խմբագրում (գծածն իրենն է) ժողովածու, Դժբախտաբար մեր սպասելիքը (Աստուած զիտէ թէ ինչ էր սպասում Ա. Վ. Ղ.) չարդարացաւ, երգերի մէջ կան կտորներ, որոնք ժողովրդական չեն, այլ թխուած, սարքած, բերենք օրինակներ:

Եւ բերում է իբրեւ ապացոյց օրինակներ և բոլորն այսպիսի աննման «օրինակներ».

«Ք 1 երգի Բ եւ Դ քառատողերը ժողովրդական չեն ու չեն երգւում, այդ երգը երկու քառատող ունի միայն ¹⁾, Ք 11, Ժողովուրդը ձին չի թամբում, այլ թամբում է: Ք 13, Դ քառատողն ապներեւ սարքովի է, ըստ իս միայն Ա քառատողն է բուն ժողովրդական: Ք 17 երգի առաջին երկտողը սարքովի ենք հաշուում, ինչպէս եւ մնացած մի երկուսը: ՔՔ 20, 21, 22 եւ 24 երգերի վերջին քառատողերը թխովի են: Ք 29 ժողովուրդը կուրծք չգիտէ, ասում է սիրտ եւ դօշ. չորրորդ տողի «ծովինը» ժողովրդական չէ. սէտք է «մաւին» լինի: Ք 31 երգի մէջ «Հօյ նաղան իմ» չէ, այլ «Հօյ նաղան ըմ»: (Ք 37 երգի կրկնակի «գարնան քարեր գուն վարդ արեր»-ը ժողովրդական չէ, այլ թխովի: Ք 38 Զուգի երգի կրկնակի վերջին երկու տողը թխովի է: Առաջին եռեակի երկրորդ տողը իսկականի մէջ «սիրուն արի» չունի, այլ «իրգուն արի»: Ք 40 երգի երկրորդ քառատողի շինծուութիւնը իր սղջը ցոյց է տալիս «սուբալով» բառի գործածութիւնը, որ

1. Հետաքրքիր է իմանալ, թէ ո՞րն է մատենախօսի իմացած երկրորդ քառատողը, քանի որ «Հաղար ու մի խաղի» մէջ դրած երրորդ քառեակը, ինչպէս և երկրորդն ու չորրորդը, խմբագրողներին ընտրութեամբ, այն էլ վարիանտները բաղդատելուց յետոյ են դրուած իբրեւ շարունակութիւն առաջին քառեակին: Այս յայտնուած է և երգարանի ծանօթութեան մէջ: Արդ ինչպէս է լինում, որ մեր ընտրութեամբ իբրեւ շարունակութիւն դրած երկրորդ ու չորրորդ տները չեն կրգւում, իսկ երրորդը, որ դարձեալ մենք ենք գրել իբրեւ շարունակութիւն, երգւում է ժողովրդի մէջ: Շատ պարզ է, որ մատենախօսը ուղեցել է միայն մի բան ասած լինելու իսկ թէ երկրորդ և չորրորդ քառեակները, ինչպէս և միւս «թխովի» համարած երգերը, ժողովրդական են, աւելորդ է ապացոյց բերել, քանի որ մատենախօսն առանց փաստի սխառում է տալիս: Մենք այդ քառեակներից շատերի համար նոյն իսկ վարիանտներ ունինք և կարող էինք ցոյց տալ թէ որը որ տուլած ժողովածուի մէջ կայ:

Ժողովրդական չէ¹⁾։ № 41 երգի մէջ «չար ազգաւը» չի ասուած ժողովուրդը, այլ չալ ազգաւ, կամ սեւ ազգաւ։ Հարբանի մասին թողնուած եմ բան առեւ առ այժմ։ № 42-ի կրկնակի երկրորդ տողը «սիրունիկ, պազդ անուշ է» ցունի, որ ժողովրդական չէ, այլ «սիրունի պազն անուշ է»։ № 43 երգը երկտող է։ առաջին տողի մէջ «մէջ ջիւան» չէ, այլ «մէկ ջիւան», անկասկած²⁾։ Երկրորդ կրկնակն այս երգին չի պատկանում, կայցնովի է։ երկրորդ քառատողի երկրորդ եւ չորրորդ տողերը թխովի են։ Նիթէ «Թաղացան»-ը պիտի հայերէնի թարգմանուէր, այն ժամանակ «նորացանի» տեղ պէտք է վերցնէին ժողովրդական «նորոգուան» ձեւը»։

Միթէ քննադատութեան մարգարիտներ չեն այս, և միթէ որ և է խմբագրութեան համար պատուաբեր է այսպիսի անկանտրոլ բան տպագրելը։ Բայց մենք ամբողջ արտագրենք.

№ 6 երգը հիմնովին աղծատուած է. դա սկսուած է այսպէս. «Հոյ նարէ, գուլթանը հաց կը տանիմ»³⁾։ № 10 երգն սկսուած է այսպէս. «Եթե կինըր ամալ է ... Երգի ինծուլթիւնը առաջի քառատողի «Հողեակն հոն է» տողն է մատնում, որ ժողովրդական չէ։ № 29 երգն այսպէս է. «Կայնեւ ես ...»։ № 33 երգը Ղարսեցոց երգ է եւ հիմնովին աղծատուած է ժողովածուի մէջ, ահա իսկականը. «Ես վերէն կուգայի ...»⁴⁾։ № 24 եւ 28 երգերը կողբի լէ-լէներից են. արժէ դրանց իսկականը վերականգնել, որ ժողովածուի մէջ խառնաժոյժորուել է ուրիշ բովանդակութեան հետ»։

Եւ եպա բերում է իւր գիտցած մի բան իբր «իսկական»։

Մենք արտագրեցինք այդ գոհար քննադատութեան փաստերն, կամ քննադատի «օրինակներն» ամբողջ. և անշուշտ իրաւունք ունէր մատենախօսն այդպիսի անհերքելի օրինակներից հետեւեալ եզրակացութիւնն անելու.

«Այսքանը շատ բաւական ենք հաշուած ցոյց տալու համար, որ խմբագրութիւնը շատ դէպքում ձեռքի տակ եղած նիւթից չէ կարողացել ջնջել բուն ժողովրդականը շինծու, թխովի տողերից՝ թէեւ այդպիսիները նոյն իսկ իբր բանաստեղծութիւն դեղեցիկ չենէին»։

Եւ դու, ընթերցող, պարտաւոր ես համոզուել, որ եթէ Ա. Վ. Ղ. թխովի, սարքովի է ասում, ուրեմն թխովի

1. Գա տպագրական սխալ է։ Մեր ժողովածուի մէջ ունինք այդ տողի համար վարիանտներ. «Աաքաւի պէս սորալով», «Քանց կաքաւ սորոր տալով» և «Քանց կաքաւ չորոր տալով»։

2. Մեզ տպագրական սխալ է. տես ցանկը, որի մէջ մեկ է։

3. Մենք այս կրկնակն ու տունը տեսանք մեր յօդուածի ընթացքում։

4. Մենք այս էլ տեսանք մեր յօդուածի ընթացքում։

և սարքովի են. դու պէտք է հաւատաս նրան, այդ լիկ խօսքերին: Ի՞նչ պէտք են ապացոյցներ: Բաւական է, որ կրիտիկոսն ասում է՝ Այս է «խակականը»: Իսկ մենք էլ ակնածութեամբ կը լսենք հետեւեալ խրատին, որ տալիս է մեզ Ա. Վ. Ղ.

«Որովհետեւ գիրքը կրում է խմբագրեցին անունը, ուստի պարտք ենք համարում մի քանի խօսք ասել պ. Աբեղեանին, որովհետեւ այն ինչ որ չենք կարող պահանջել հ. Կոմիտասից, իրաւունք ունինք պահանջելու պ. Աբեղեանից, իբր մասնագէտից եւ պատրաստութիւն ունեցողից, որ արդէն գործով էլ ցոյց է տուել այդ բանը: Ահա մեր նկատողութիւնները. — Կախ. Ժողովրդական երգերը, որոնք ժողովրդի մտքի եւ հոգու ծնունդն են, չը պիտի ենթարկուեն որեւէ սրբագրութեան. դա ներելի չէ եւ ոչ մի տեսակէտից, Ժողովրդական բանաստեղծութիւնը ազգագրական նիւթ է, գրական, գեղարուեստական, լեզուական եւ այլ խնդիրներ ուսումնասիրելու համար. այդ նիւթերը շատ անգամ գալիս են խորը հնութիւնից. նրանք մեզ պատմում են անցած-գնացած բաներից խօսուն կենդանի լեզուով: Ասացէք խնդրեմ, լնչ իրաւունքներով սրբագրութիւններ մտցնել նրանց մէջ, Կա, ով չգիտէ, ծա. նօթ չէ հրատարակուած նիւթին, լնչպէս իմանայ, թէ որպիսի սրբագրութիւններ են արուել, լնչ օտար բառեր են հայերէնի վերածուել, եւ առ հասարակ ինչիւ ալ դա բառերը թարգմանել, Ի սէր ազգագրական գիտութեան ձեռքի տակ եղած նիւթերը տուէր առանց սրբագրութեան, այնպէս ինչպէս որ կան. նրանք առանց սրբագրութեան էլ շատ գեղեցիկ են»:

Ընթերցողը կը ներէ, որ մենք գրեթէ ամբողջ արտագրեցինք այդ յօդուածը, բայց կարծում ենք՝ աւելորդ չէ, որովհետեւ այդտեղից հենց երևում է, որ «Ժողովրդական երգարան» և «աղագրական նիւթ» խառնուում են մեղնում: Իսկ մենք հենց այդ շփոթ գաղափարն ենք պարզել ուզում: Այն ամենը, ինչ որ Ա. Վ. Ղ. գրում է՝ իբրեւ նորութիւն ծախելով մեզ, վերաբերում է միայն աղագրական նիւթեր ժողովողներին, այս դէպքում բանահաւաքներին. և ոչ թէ ժողովրդական երգարան խմբագրողներին: Դա հում նիւթն է, անմշակ ու խառն դրութեան մէջ:

Այդ աստիճանից յետոյ նախ քան երգարան խմբագրելը գալիս է դեռ բանասէրների գործը: Ի՞նչ պիտի լինի մեր բանասէրների խնդիրը: Ուսումնասիրել այդ հում նիւթը. բաղդատել երգերի վարիանտները, վերականգնել աղճատումները, ինչպէս մենք ցոյց տուինք նախորդ գլուխների մէջ. դասաւորել խառն նիւթը բովանդակութեամբ

կամ որ և է տեսակէտով նայելով ուսումնասիրողի հայեացքին ու նպատակին, և այլն։ Բայց այս արդէն մասնագէտ մարդու աշխատանք է, և մասնագէտն առանց մեզ էլ դիտէ թէ ինչ կարելի է և ինչ պէտք է անել. իսկ մասնագիտական զարգացում՝ չունեցողին ուսումնասիրութեան ծրագիր տալ չի կարելի։ Միայն այսքանը ասենք, որ ոչ մի մասնագէտ մարդիւր ուսումնասիրութեան նիւթի համար չի դիմել մեր «Հազար ու մի խաղին», մի ժողովրդական երգարանի, որի երգերը, ինչպէս ծանօթութեան մէջ, եր. 65, ասուած է. «որոշուած են երգելու և ոչ թէ կարդալու համար»։ Այլ նա կը դիմի Շերենցի, Սրուանձտեանի, Լալայեանի և ուրիշների ժողովածուներին։ Եւ ոչ մի մասնագէտ չի պահանջիլ, որ այդպիսի երգարանի մէջ, որ կարդալու համար չի որոշուած, երգերը բաժանուած լինին ըստ դաւառների։ Միմիայն պ. Ա. Վ. Դ-ի պէսերը կարող են ժողովրդական երգարանի համար գրել. «երգերը չեն բաժանուած ըստ դաւառների, այլ խառն ի խուռը¹⁾»։ մինչդեռ այդ անհրաժեշտ է շատ նկատումներով։ Գոնէ վերջում ցանկ լինէր ըստ դաւառների։— Հետաքրքիր է իմանալ, որոնք են այդ «շատ նկատումները», որ պահանջում են մի երգարանից, որի երգերը որոշուած են երգելու և ոչ թէ կարդալու համար։—

Այս բանասիրական աշխատանքից յետոյ միայն կարելի է երգարան խմբագրել։

Ինչ պիտի լինի ժողովրդական երգարան խմբագրողի խնդիրը և յատկապէս, ինչպէս այս դէպքում, երբ երգերը ժողովրդական են։ Ահա մի դործ, որ նորութիւն է մեզիւմ և որի մասին ուզում ենք գրել այսպէս։

Արդեօք երգարան խմբագրողը երգերը պիտի տպագրէ ան ձևով, ինչպէս ժողովուրդն է երգում, աղճատուած, անիմաստ, անկապ, յաճախ կոպիտ բովանդակութեամբ։ Այդ շատ հեշտ բան է, և այդպէս վարուել են մեր մի

1. Մեր երգարանի մէջ երգերը դասաւորուած են ըստ բովանդակութեան։

երկու այսպիսի երգարան կազմողները: Սակայն այդ սխալ բան է: Ժողովուրդն այսպիսի երգարանի կարիք չունի. նրան առանց այդպիսի երգարանների էլ յայտնի են իւր երգերը բերնէ բերան լսելով. և եթէ յայտնի չեն, հարկաւոր էլ չէ, որ նա այդպիսի անմտութիւններ սովորէ:

Եթէ մէկը երգարան է տալիս ժողովրդի ձեռք, այն էլ իրեն ժողովրդի երգերը, ինչպէս ամենայն ժողովրդական զիւրք՝ աւելի ևս երգարանը պէտք է կրթիչ լինի: Այս նպատակի համար պէտք է ուրեմն խմբագրելով ազնուացնել երգերը.

Բացատրենք մեր միտքը:

Ազնուացնել չի նշանակում թէ հրատարակողը իւր քէֆին՝ ուզած ձևով փոփոխելով ժողովրդական երգերը «չինծու», «թխովի», «սարքովի» երգեր պիտի տայ ժողովրդին ժողովրդական երգի անուան տակ: Այդ եղանակով, եթէ խմբագրողը շնորհքով է, արդարեւ կարելի է ժողովրդական երգը որոշ չափով ազնուացնել. յայց երգը կը կորցնի իւր ժողովրդական բնաւորութիւնը և կը դառնայ մասամբ արուեստաւոր երգ:

Չորս տարի առաջ Կոմիտաս վարդապետի հետ միտք ունեցանք ժողովրդական երգարան հրատապակելու՝ սկսելով ժողովրդական երգերից: Սկզբում կարծում էինք, թէ դա մի թեթեւ բան է. հարկաւոր է միայն երգերի պատրաստի նիւթից օգտուելով շարել տներ: Բայց երկու ամիս չանցած տեսանք, որ այդպիսի երգարանը ոչ մի արժէք չի ունենալ: Դա նոյն հում նիւթը կը լինէր, ինչ որ կայ մեր ժողովածուների մէջ: Փորձով համոզուեցանք, որ նախ քան երգարան խմբագրելը հարկաւոր էր մի ծանր աշխատանք կատարել. նախ պէտք էր յանձն առնել բանասիրական ծանր աշխատանքը, որի մասին վերեւում յիշեցինք, և որ դեռ կատարուած չէ մեր երգերի վերաբերմամբ. եւ մենք երկու տարի պարապեցինք այդ գործով. նախ քան երգեր խմբագրելը մեր ձեռի տակ ունեցած բազմաթիւ ու բազմազան խաղերի և ուրիշ երգերի վարիանները բաղդատեցինք, որպէս զի խմբագրու-

Թեան ժամանակ կարողունանք որոշել աղճատուած ու անիմաստ երգերը և օգտուենք միայն ընտիրներից: Ուրիշ խօսքով, որպէս զի ժողովրդական երգերն աղնուայնենք ժողովրդականի սահմաններում: Եւ միթէ այս չենք յայտնած մեր երգարանի ծանօթութեան մէջ, եր. 65. «Ձեռի տակ ունեցած լինելով մօտ 25 հազար քառասուն զերի ժողովածու, ինչպէս և ուրիշ երգերի վարիանտներ, բազդատել ենք նոյն երգերի վարիանտները և վերցրել մեր կարծիքով ընտիր համարուած ձևերը: Եթէ թուրքերէն բառերի տեղ հայերէնը դառն ենք, հայերէնն ենք պահած. բայց և այնպէս դեռ յաճախ մնում են թուրքերէն բառեր, մանաւանդ յանգերի մէջ»:

Կարծում ենք, ամեն ընթերցող պէտք է այս կարգալուց յետոյ հասկանար թէ մենք ինչ ենք արել: Բայց Ա. Վ. Ղ. այդ չի հասկացել, գուցէ և չի ուզեցել հասկանալ, գուցէ և, բայց անհասկանալի կերպով, դիտմամբ լռել է այդ մասին:

Ինչպէս պէտք է անել ժողովրդական երգերի խմբագրութիւնը և ինչ հայեացքով պէտք է առաջնորդուել:

Երգարան խմբագրողը պէտք է ի նկատի ունենայ.

1. Որ բազդատութիւնից ձեռք բերած իմաստալից ու գեղեցիկ վարիանտները պիտի մտնեն երգարանի մէջ.

2. Որ բոլոր կոպիտ զգացումները, գուեհիկ մտքերն ու արտայայտութիւնները տեղ չպիտի գտնեն երգարանի մէջ.

3. Որ երգերի լեզուն ժողովրդի տուածի սահմաններում հնար եղածի չափ մաքրուի և մօտեցուի գրական լեզուին:

4. Որ անկախ խաղերից կողմուած երգերի մէջ տրւաների ընտրութիւնն այնպէս լինի արած, որ ամբողջ երգը քիչ ու շատ ընդհանուր կապակցութիւն ունենայ և իմաստալից բան դառնայ:

Այս կէտերից առաջինի մասին, այն է աղճատուած և իմաստալից վարիանտների ընտրութիւնը, մենք արդէն գրել ենք, բացատրենք միւս կէտերը:

Ժողովրդական երգերը չի են կոպտութիւններով.

քանի որ ժողովուրդն ինքը բիրտ է: Ինչի՞ նման կը լինի, եթէ այդպիսի բիրտ ու տգեղ բաները, որովհետեւ ժողովրդական են, ժողովրդական երգարանի անուան տակ յետ դարձուն ժողովրդին:

Այդպիսի բրտութիւնները ժողովրդական երգերի ժողովածուների մէջ իրենց տեղն ունին, որովհետեւ օրանք գիտական բնաւորութիւն ունին, բայց երգարաններից, իբրեւ ժողովրդական գրքերից, պիտի հալածուին անպայման, և հալածուին երկու կերպ. կամ ամբողջ երգը կամ խաղը չպիտի առնել երգարանի մէջ, կամ, եթէ վարիանտները տալիս են նրբացած և ազնուացած ձևեր, այս վերջինները պիտի վերցնել: Օրինակով բացատրենք:

Մենք վերևում խօսեցինք Զուլոյի բնաւորութեան մասին. նրա վրայ երգուած քառեակների մէջ բնական է լինին այնպիսիները, որոնք զեղծ բնաւորութիւն ունենան: Օրինակ հետեւեալը, որ կայ Քնար Հայկական եր. 176.

Մեր տան ետեւ արտ մ' մասուր,
Զուլօն առնեմ, մտնեմ մսուր,
Զուլօն սիրեմ, թորկեմ սկեսուր:

Արդեօք պէտք է ժողովրդական երգարանի մէջ առնել այդ տունը. կամ Մաստարեցի Ալեքի այս զեղծ հրաւէրն՝ ուղղուած Զուլոյին:

Նս Ալեքն եմ Մաստարեցի,
Իրկուն արի միւր տուն կեցի
Դէմ աղօթրան եկեղեցի:

Կամ աւելի բացայայտ Զուլոյի, այդ անառակ կնոջ հրաւէրն ուղղուած տղային.

Նս Զուլօն եմ Մաստարեցի,
Իրկուն արի մի տուն կեցի
Դէմ աղօթրան եկեղեցի:

Արդեօք պէտք է այդ և դրանց նման տները մտնեն ժողովրդական երգարանի մէջ: «Մուրճի» գաւառագիտուն մատենախօսի կարծիքով՝ այո՛, որովհետեւ «խսկականի մէջ

սիրուն արի շունի, այլ իրգուն արի: Բայց դա ճաշակի
և զգացմունքի խնդիր է, եթէ կան այնպիսիք, որոնք
իրենք սիրեն և հաճութեամբ ժողովրդի ձեռք տան այդ-
պիսի բամբառակ երգեր, մենք այդ մեր ճաշակից ու
զգացմունքից շատ հեռու ենք գտնում: Մեր կարծիքով
սխալ է այդ, սխալ նոյն իսկ արուեստի տեսակէտից:
Երգարանն ու երգը գրանով կորցնում են իրենց ար-
ժէքը քանի որ ամենայն գրական երկի արժէք չափւում է
այլ և իւր բարոյականով:

Ժողովրդին երգարանի մէջոցով այդպիսի բամբա-
ռակ բաներ տալ՝ նշանակւում է քաջալերել այդ, կրթե-
լու և ազնուացնելու փոխանակ՝ աւելի ևս փչացնել: Ի՞նչ
պիտի անել ուրեմն: Կամ, ինչպէս ասացինք, այդպիսի
խաղերը պէտք է դուրս ձգել, կամ, եթէ կայ, պէտք է
ազնուացած վարիանտը վերցնել: Եւ բարեբախտաբար
ինքը ժողովուրդն արդէն յաճախ ազնուացրել է այդ-
պիսի կոպտութիւնները:

Ահա թէ ինչի համար է հարկաւոր նախ քան երգա-
րան կազմելը ժողովրդական երգերի վարիանտներ բաղ-
դատել: Աշխատանքը ծանր է, բայց երգարան խմբագրողը
պարտաւոր է այդ անել: Եթէ մենք այդ աշխատանքն
առաջուց արած չլինէինք, դուցէ մեզ ծանօթ չլինէր, որ
իրիւն բառի տեղ այդ խաղի մի վարիանտի մէջ կայ
սիրուն բառը.

Ես Ալեքս եմ Մաստարեցի,
Սիրուն, արի մեր տուն կեցի,
Ի՛նչմ աղօթքան եկեղեցի:

Մի բառ է փոխւում, ճիշտ է, բայց որքան տար-
բերւում է այդ մի բառով երգի իմաստը: Առաջին եր-
կու վարիանտի մէջ տղան Զուլոյին կամ Զուլոն տղային
հրաւիրում է, որ երեկոյեան գայ իւր տանը մնայ, «գէ՛մ
աղօթքան եկեղեցի», այսինքն մինչև լուսաբաց, ժամ ասելը:
Միտքը հասկանալի է: Իսկ այստեղ երրորդ վարիանտի մէջ
տղան աղջկան, սիրունին, հրաւիրւում է իւր տանը մնալու:

բայց ոչ երեկոցեան, այլ հասկանալի է, իբրև իւր կինը: «Դէմ աղօթքան եկեղեցի» տողը, քանի որ ժամանակ ցոյց առաջ իրկուն բառը չկայ, կորցնում է իւր ժամանակի իմաստը և ստանում է տեղի իմաստ: Գրանով աղան որոշում է իւր տան տեղը: Գուցէ գտնուին մեզ հետ չհամաձայնողներ, բայց մենք մանրամասն բացատրութեան մէջ չենք ուզում մանել: Այսքանը դոնէ կարելի չէ մերժել. որ իրկուն բառի փոխանակ ոիրուն բառը մտնելով՝ երգը կորցնում է իւր զեղծ բնաւորութիւնը և որոշ չափով, մեր կարծիքով բոլորովին, աղնուանում է: Այս ի նկատի ունենալով մենք այդ երեք վարիաւորներէն ընտրել ենք «աիրուն արի»:... ձևը:

Բայց «Մուրճի» մատենախօսը, որ յանձն է առել քննել մեր «Հազար ու մի խաղը», այսպիսի «նկատումներին» մասին բնաւ չէր կարող մտածել, այլ այնպիսի «նկատումներին», որոնցով ժողովրդական մի փոքրիկ երգարանի մէջ երգերը պիտի բաժանուէին ըստ դաւառների... Եւ այդ քննադատը, որին ծանօթ է միայն վերստում դրած 2-րդ վարիանտը, պատրաստ է գրելու թէ այդ «եռեռակի երկրորդ տողը իսկականի մէջ սիրուն արի չունի, այլ իր գուն արի»: Ի՞նչ կասէր նա, եթէ նրան ծանօթ չլինէր և առաջին տողը. «Ես Ալէքն եմ՝ մաստարեցի», այլ միայն աւելի տարածուած և յայտնի ձևը՝ «Ես Զուլօն եմ՝ մաստարեցի»: չէր ասիլ թէ առաջին տողն էլ «չինծու» է: Ի՞նչ կասի նա, եթէ նրա առաջ դնենք այդ եռեռակի մի չորրորդ վարիանտ ևս, որ կայ Քնար Հայկական եր. 173 և Տաղեր ու Խաղեր. եր. 243.

Ես Զուլօն եմ մաստարեցի,
Հինգ օր արի մեր տուն կեցի,
Դէմ աղօթքան եկեղեցի:

Ահա այստեղ էլ «իրկուն»-ը դարձաւ «հինգ օր»: Ո՞րն է «իսկականը»: Անշուշտ «իրկունը», կասէ Ս. Վ. Դ. որովհետեւ նրան այդ է միայն ծանօթ եղել:

Կարծում ենք, երբ մարդիկ յայտնուի են թէ բող-

դատել ենք վարիանտները և «վերցրել մեր կարծիքով ընտիր համարուած ձևերը», պիտի հաւատալ նրանց և շատ շատ՝ պատճառաբանուած ձևով կարծիք յայտնել թէ վերցրած ձևն ընտիր չէ, այլ աւելի ընտիր է այս ինչ կամ այն ինչ ձևը, և ոչ թէ խրատ կարգաւ թէ ժողովրդական «բանաստեծութիւնն ազգագրական նիւթ է և չպիտի ենթարկուի որ և է սրբագրութեան»:

Բայց մենք գանք միւս խնդրին, որ է երգերի լեզուն ժողովրդի տուածի սահմաններում՝ հնար եղածի չափ մաքրել և մօտեցնել գրական լեզուին:

Այս խնդրի նկատմամբ շատ բան կարելի է գրել. ուստի և այս յօդուածի մէջ չենք ուզում գրել. որովհետեւ հարկ պիտի լինէր բացատրել գրական լեզուի նշանակութիւնը մի ազգի համար: Միայն այսքանն ասենք, որ գրական լեզուին մօտեցնել չի նշանակում՝ սրբագրութիւններ մտցնել ժողովրդական երգի մէջ, այլ տարբեր վարիանտներից այն ընտրել, որն աւելի մօտ է գրականին. օրինակ եթէ ունինք Ղարաբաղի և Արարատեան բարբառով վարիանտներ, պէտք է ընտրել վերջինս, որ աւելի մօտ է գրականին: Եւ որ գլխաւորն է՝ պէտք է խուսափել ժողովրդական արտասանութեան համեմատ ուղղագրութիւնից: Այս դէպքում բարբառները մեծ մասամբ կը մօտենան գրական լեզուին և հասկանալի լինելու համար դժուարութիւն չի լինիլ. որովհետեւ մեր բարբառները մէկմէկուց ոչ այնքան քերականութեամբ ու բառերով են տարբերում, որքան հնչիւնաբանութեամբ: Մի բան միայն անպայման պիտի կատարել, որ և մենք արել ենք «Հազար ու մի խաղի» մէջ. այն է եթէ վարիանտների մէջ, ինչպէս յայտնած ենք եր. 65, «թուրքերէն բառերի տեղ հայերէնը դառել ենք, հայերէնն ենք պահած»: Այս տարրական բանը և այսքան պարզ գրուած բանն ևս չի հասկացել «Մուրճի» մատենախօսը, որ բացականչում է թէ «նշ իրաւունքով» ենք մենք այդ արել: Այն իրաւունքով, որ հայերէն է, և որ հայերէնը հայոց լեզուի մէջ աւելի գերադաս է քան թուրքերէնը: Զարմանալի է ի հարկէ, որ այսքան պարզ ճշմար-

տութեան դէմ կանգնողներ ևս կան և այսքան տարրական բանն էլ չեն հասկանում նոյն իսկ մատենախօսները... Բայց նրանք ոչ թէ չեն հասկանում, այլ կատարեալ լռութիւն պահելով այն մասին, ինչ որ մենք գրել ենք մեր ծանօթութեան մէջ, իրենցից բաներ են վերագրում մեզ՝ իբր թէ մենք «տար բառերը հայերէնի ենք վերածել» կամ «թարգմանել»։ Եւ ահա սրտաճմլիկ արցունքներ թէ «ժողովրդական բանաստեղծութիւնն ազգագրական նիւթ է... Ի սէր ազգագրական գիտութեան ձեռքի տակ եղած նիւթերը տուէք առանց սրբագրութեան, այնպէս ինչպէս որ կան. նրանք առանց սրբագրութեան էլ շատ գեղեցիկ են»։ Եւ այս բոլորը ինչի՞ համար, — նրա՞ համար, որ եթէ մեր ձեռի տակ եղած մի վարիանտի մէջ թուրքերէնի տեղ հայերէնն է եղած, «հայերէնն ենք պահած»։ Չէ՞ որ, եթէ թուրքերէնը պահէինք, հայերէնը չէինք կարող պահել։ Ուրեմն «ի սէր ազգագրական գիտութեան» ժողովրդական երգարանի մէջ երկուսն ևս պահէինք...

Վերցնենք մի օրինակ. մենք ունեցել ենք ձեռի տակ մի վարիանտ հետեւեալ ձևով.

Արազը հեշտացել ա,

ձամբէքը կոշտացել ա.

Խաբար տարէք իմ կարին,—

Մուշտարիս շատացել ա:

Նոյն երգի մի ուրիշ վարիանտի մէջ վերջին տողն եղել է «առողս շատացել ա», և մենք ընտրել ենք առողս բառը։ Ի՞նչո՞ւ, — մի միայն նրա համար, որ հայերէն է, իսկ հայոց լեզուի մէջ հայերէնն աւելի ընտիր է։ «Ի սէր ազգագրական գիտութեան» ուրեմն մեր երգարանի մէջ «մուշտարիս» պահէինք, թէ՛ երկուսն ևս միասին։ Հասկացա՞ւ արդեօք մեր «ազգագրական գիտութեան» համար ողբացող մատենախօսը, որ մենք «թարգմանութիւն» ու «վերածում» չենք արել, այլ միայն տարբեր վարիանտների մէջ ընտրութիւն։ Եթէ այդպէս վարուած լինէինք, այլ ևս չէինք գրիլ թէ՛ «դեռ յաճախ մնում են թուրքերէն բա-

ուեր, մանաւանդ յանգերի մէջ: Յանգերը թողնենք, միթէ գծուած էր մեզ համար հայերէն «թարգմաներ» կամ «վերածել» տողերի մէջ մնացած հետեւեալ բառերը՝ դարդ, մալուլ, դարիբ, բլբուլ, խաբար, բաղ, ֆիդան, բոյ, մարջան, խալիչէքը, թառլան, հաղըրել, զուշ, եարաբ, դարդիման, դարդեար, սալգաթ ևլն, որոնք յանգի մէջ չեն:

Միջանկեալ ասենք, որ «Մնացիր, մնացիր, սալդաք գնացիր» կրկնակի համար այժմ ունինք «զինուոր գնացիր» վարիանտը, որ կոմիտաս վարդապետը նոր գրել է Կողբ գիւղում: Նոյն իսկ ժողովրդի մարդկանցից: Եւ միթէ զարմանալի է, որ «սալգաթ» բառի տեղ ժողովրդի մարդը «զինուոր» է երգում: Հապա ինչո՞ւ համար են ուսումնաւորները, չէ որ ժողովրդի լեզուն ևս մաքրում է գրականութեան ազդեցութեան տակ: Այդ պատճառով և «Հազար ու մի խաղի» երկրորդ հրատարակութեան մէջ մենք այդ «սալգաթ» բառի տեղը «զինուոր» բառն ենք առել: Այս էլ ասեմ, որ վերեւում յիշած Արազը հեշտացել ա՝ քառեակի վերջին տողի «մուշտարին» բառի գիւմաց առաջին հրատարակութեան ժամանակ ունէինք «առողս» ձևը, այժմ ունինք և «առնողս» ձևը, որ և մտել է երկրորդ հրատարակութեան մէջ, որովհետեւ գրական ձև է:

Մենք թուրքերէն բառերի համար այս գրում ենք, որովհետեւ միայն «Մուրճի» մատենախօսը չէ, որ այդ չի հասկանում, այլ և ուրիշները: Մեզ պատահել է նոյն իսկ թուրքերէնի ոչ պաշտպան մարդկանցից լսել թէ իբր մենք փոխած ենք հայերէնի հետեւեալ կրկնակի երկրորդ տողի երկու բառը.

Ո՞վ էր տեսել սիրած հարը մոռանայ,
Ով մոռանայ, ջուխս աչքերով փռանայ:

Հազար ասա՝ ճիշտ է, ձեր ասած վարիանտը կայ և մեզ ծանօթ է եղել, բայց կայ և մի վարիանտ՝ «Ով մոռանայ, երկու աչքով կուրանայ», նրանք հայերէն բառերի կողմնակից մնալով հանդերձ՝ դարձեալ իրենց ասածին կը

մնան, որովհետեւ ժողովրդական երգի վարիանտների մասին ծանօթութիւն չունին: Այդպէսները թող կարգան «Մուրճի» դաւառագիտուն մատենախօսի գրածը, որ «խականը վերականգնած» ձևի մէջ գրած ունի՝ «Ով մոռանայ, երկու աչքով կուրանայ»: Կը նշանակէ նրան եւս ծանօթ է եղել այդ վարիանտը:

Անցնենք վերջին խնդրին, այն է երգերի տների իմաստալից կապակցութեանը:

Այս մասին «Հազար ու մի խաղի» ծանօթութեան մէջ, եր. 66 գրած ենք. «Համար 33, 37, 38 48 և 49 երգերը ժողովրդի մէջ անկապ տներով, խառն ի խուռն երգւում են այս կամ այն անձի կամ զանազան համանման գէպերի և այլն մասին: Այսպիսի բազմաթիւ տներից առել ենք միայն ընտիրները և աշխատել ենք այնպէս դասաւորել, որ որոշ իմաստ արտայայտուի: Մնացած 36 երգը մեր խմբարութեամբ են կազմուած: Ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որևէ եղանակով և ապա իրեն ծանօթ քառասողերից, առանց մտքին ուշադրութիւն դարձնելու, շարունակութեան մէջ երգում է անխտիր այս կամ այն քառասողը: Մենք աշխատել ենք յաջորդ տների ընտրութիւնն (աւելացնում ենք՝ օգտուելով խաղերի այն վարիանտներից, որոնք յարմարւում են մտքին) այնպէս անել, որ բոլորը միասին, որքան կարելի է, մի ամբողջութիւն կազմեն և յարմար լինին եղանակին և կրկնակների իմաստին»: Մի երես առաջ էլ գրած ենք. «Տների իմաստի կապակցութեան թերին լրացնում են եղանակն ու կրկնակները»:

Կարծում ենք, ով որ կարդացել է մեր յօդուածի նախորդ գլուխը՝ «Երգերի զարգացումը խաղերից», և ուշադրութեամբ կարդայ վերևում գրածը, կը հասկանայ, որ տների կապակցութեան համար այն ենք արել, ինչ որ ժողովուրդն ինքն անում է:

Վերցնենք մի օրինակ. Տաղեր ու Խաղեր եր. 155—157 «Արազը հեշտացել ա» ելն. առաջին տանը յաջորդում են ինն տուն, որոնք բնաւ իմաստի կապակցութիւն չուն

նին իրար հետ: Մենք մանրամասն քննութեան մէջ չենք ուզում մանել, հետաքրքրուողը թող ինքը բանայ և տեսնի: Նոյն Արազը հեշտացել աւ տնից յետոյ. «Լոյս» օրացոյց 1904 եր. 480, դրած է երկու տուն, որոնցից 2-րդը միայն կայ Տաղեր ու Խաղերի մէջ իբրեւ Զ-րդ տուն, իսկ 3-րդը նոր խաղ է: Իսկ մենք այդ երգի համար վերցրել ենք չորս քառեր, որ են.

1. Արազը հեշտացել ա,

ձամբէքը կոշտացել ա.

Խաբար տարէք իմ ետրին,

Առնողս շատացել ա:

2. Իմ սէրը սուր ա դառել,

Կրակ ու ջուր ա դառել.

Նմր, քեզ օրտով սիրելը,

Ինձ թուր ու մուր ա դառել:

3. Էլի գալն եմ իմացել,

Աչքս ճամբիդ սնացել.

Քեզ համար գիշեր ցերեկ

Միաք անելով եմ կացել:

4. Բախտը զարկեց սրտիս նեւ,

Արտասուքս եղաւ գետ.

Թէ Աստուածդ կը սիրես,

Նմր, ինձ արի տար քեզ հետ:

Ինչպէս ենք վարուել այս երգի տներին ընտրութեան մէջ: Շատ պարզ կերպով: Ելակէտ ունեցել ենք՝ եղանակը, կրկնակը և առաջին տան իմաստը:

Եղանակը, Կամիտաս վարդապետի ձայնադրածը, — օրովհետեւ ուրիշները կարող են ուրիշ եղանակով ու կրկնակով երգել առաջին տունը և անշուշտ երգում են, — արտայայտում է տխուր անձկութիւն: Կրկնակն է եա՛ր, որ ասում է ամեն տղի վերջում. ուրեմն մի դիմում դէպի ետը: Իսկ առաջին տան իմաստը մենք բացատրած ենք այս յօդուածի առաջին գլխում: Այն է՝ ցուրտ աշնանը կամ ձմեռը, երբ Արազը հեշտանում է և ճանապարհները կոշտանում են, դիւղերում աղջիկ են ուզում

և հարսանիք անում: Երգող աղջկանը «չատ ուզողներ» կան, բայց ինքն ուրիշին է սիրում: Նրա սիրականն ուրիշ տեղ է, և նա ահ ու դողի մէջ, թէ մի գուցէ իրեն ստիպեն ուրիշի և ոչ սիրելիին մարդու գնալ: Նա դուրս է գալիս, նայում է շուրջը հեշտացած Արաղին ու կոշտացած ճանապարհներին և լցուած սիրտը զեղում երգով:

Խաբար տարէք իմ եարին ¹⁾,—

Մուշտարիս շատացել ա:

Ի՞նչ աւելի բնական կը լինէր քան եթէ այգալիսի եղանակ, կրկնակ, ու բովանդակութիւն ունեցող խաղին յաջորդէին տներ, որոնց մէջ լինէր նոյն տխուր անձկութիւնը նոյն դիմումը դէպի հեռու եարը և նոյն հոգեկան և ընտանեկան վիճակի զարգացումը: Եւ ահա մեր ընտրած 2-րդ տան մէջ աղջիկը դարձեալ եարին դիմելով յայտնում է իւր ներքին կռիւը սիրոյ և պարտքի

1) Մենք այս քառեակի համար ունինք մի քանի վարիանտներ, որ աւելորդ ենք համարում մէջ բերել. յիշենք միայն, որ 3-րդ տողի «եարին» բառի տեղը կայ և «նանին» (մօրը), որ և առնուած է Տաղեր ու խաղերի մէջ, մինչ «Լոյս» օրացոյցի մէջ «եարին» է: Եթէ «նանին» բառը վերցնէինք, այն ժամանակ առաջին տան, ուստի մեր խմբագրած ամբողջ երգի իմաստը կը փոխուէր. մենք փոխանակ իւր ծնողների տանը ապրող աղապ աղջկայ երգ կազմելու, պիտի կազմէինք ուրիշ գիւղ մարդու գնացած այրի հարսի երգ, քանի որ «նանին» բառն այդ իմաստն է տալիս առաջին խաղին: Ահա թէ ինչպէս ենք հասկանում իմաստի համեմատ ընտրութիւն անել ձեռի տակ ունեցած վարիանտների մէջ:—«Մուրճի» դաւաճադիտուն մատենախօսը, որի գլխով երբեք չէր անցել այսպիսի «նկատումներ», շատ թեթեւ կարող էր գրել թէ «Ք 41 երգի մէջ «չար» ագռաւը չի ասում ժողովուրդը այլ չալ ագռաւ կամ սև ագռաւ»: Այդ տողն է, «Չար ագռաւին քար կանեմ». ձեռի տակ ունինք ամբողջ քառեակի համար շատ վարիանտներ. յիշենք միայն, որ ոչ միայն չար, չալ, սև ագռաւին ունինք, այլ և քոռ ագռաւին, այլ և ագռաւներին, կաշաղակին, ճնճուղներին, էն ղշերին: Եթէ այդ քաղմազան ձևերից «չար ագռաւին» ենք ընտրել, միայն ընդհանուր իմաստի համար:

մէջ. ծնողները նրան թքում մրում են, ստիպում են որ չսիրի իւր ետրին և իրենց հաւանածին մարդու գնայ. բայց աղջիկը սրտով սիրում է նրան: Նա կուգէր իւր պարտքը, որ է ծնողների կամքը, կատարել. բայց չի կարող սրտով սիրածից ձեռք վեր առնել: Այս պատճառով և նրա «սէրը սուր է դառել», կտրատում է նրան, նա միայն հողում չի տանջւում, այլ և ամբողջ մարմնով: Նրա ներսում սէրն ու սրտքը կռւում են հակառակ մէկմէկու ինչպէս «կրակն ու ջուրը»: Ո՛րքան սեղմ և միանգամայն գեղեցիկ ու լիակատար արտայայտութիւն այդ ներքին կռուի հոգեբանութեան:

Տեսնենք 3-րդ տունը: Այստեղ նոյն դրութեան շարունակութիւնն է. «էլի», այսինքն ուրիշի, ուրիշների (=այլ) «գալն եմ իմացել, աչքս ճամբիդ մնացել», ասում է աղջիկը ետրին դիմելով. ուրիշները գալիս իրեն ուզում են, բայց իր ետրը, իր սիրելին, ինչո՞ւ չի գալիս. երբ պիտի գայ նա. թէ իսկի չպիտի գա: Նա իւր ետրի համար գիշեր ցերեկ այս է միտք անում: Եւ ապա 4-րդ տան մէջ դառնալով դարձեալ իր սրտին, նոյն վէրքը, նոյն սուրն ու նետն է տեսնում ցցուած իր սրտի մէջ: Նա իրեն դժբախտ է զգում. ուստի և ուրիշ միջոց չունի, բայց եթէ դեռ արտասուք թափել: Բայց նա այդ յուսահատական անզօրութեան մէջ մի վերջին ազադակ է արձակում. «Թէ Աստուածդ կը սիրես, ետր, ինձ արի տար քեզ հետ»:

Կարծում ենք՝ յանցանք չենք գործել, որ առաջին տան ետեւից այս երեք տունն ենք ընտրել: Եւ կարծում ենք թէ մի իմաստալից և, կարող ենք ասել, սիրուն երգ է մեր խմբագրածը, և թէ այսպէս պէտք է անել ժողովրդական երգարանների խմբագրութիւնը:


Մենք այս երգը վերցրինք ոչ թէ նրա համար, որ մեր խմբագրութեան մէջ ամենից յաջողն է, այլ այն պատճառով, որ նոյն «Մուրճ» ամսագիրը, մեր այս յոգուածի առաջին գլուխն երբ տպագրուեցաւ, գրեց թէ մեր «բացատրութիւնները միանգամայն համողիչ և սրամիտ են թւում», և արտագրեց ամբողջ այս երգի առաջին քա-

աւելի բացատրութիւնը:

Երգարանի մէջ կան մեր կարծիքով աւելի յաջող խմբագրութիւններ: Բայց դա ճաշակի խնդիր է. օրինակ արժ. Մեսրոպը վարդապետը «Արարատի» մէջ տպուած մի մատենախօսութեան մէջ ամենից յաջողներից է համարում «Հով արէք սարեր ջան» և «Կապուտ քուռակ հեծել եմ»: մէկ ուրիշն էլ կարող է ուրիշ երգ աւելի յաջող համարել. մի երրորդն էլ գուցէ և ոչ մէկը: Միայն այս աստեղ, որ այդ երգերի իմաստը հասկանալու համար պէտք է առանձին առանձին քառերայնների խմբատը լաւ ըմբռնել. թէ չէ տների ներքին կապակցութիւնը մութը կը մնայ:

Այս տեսակէտով գատելով կարծում ենք, որ մենք ժողովրդական երգարան այնպէս չենք կազմել, ինչպէս ցարդ արել են ուրիշները: Յաջող թէ անյաջող, բայց մենք խմբագրել ենք երգերը և խմբագրել վարիանտների բաղդատութեան ծանր աշխատանքը կրկնուց յետոյ:

Մ. Ս. Բեղեան.



Է.

ԿԱՐԱԳ.

Ագարակատէրերը, գիւղացիները և առհասարակ ամեն մի կովատէր կովերից ստացած կաթից կարող են տարբեր եղանակներով օգտուել: Եթէ ագարակը կամ գիւղը քաղաքին կամ պանիր ու կարագ պատրաստելու գործարանին մօտ է գտնուում, կաթը կարող է ծախուել. բայց եթէ այդպիսի յարմարութիւններ չկան, անասնատէրերն սկսում են պատրաստել կարագ, պանիր, մածուն և այլն: Մեզանում ամենից աւելի ձեռնտու է կաթից կարագ պատրաստելն այն պատճառով, որ կովի կարագը շուկաներում միշտ լաւ գնով և օգուտով է ծախւում. կարագ պատրաստելը միշտ աւելի շահաւէտ է մեր կովատէրերի համար: